

Գ Ի Ց Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն

ՔԱՐԻ ՊԱՅՏԱՄՈՒՆՔԸ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

(Շարունակություններ։)

Գ.

Ինչպէս մեռեալի հոգին մտնում է քարի մէջ եւ իբրեւ ոգի իրեն կայան է ընտրում այնտեղ, այնպէս էլ նոյն ոգին կարող է այնտեղից դուրս գալ ու մարմնանալ։ Ոգու այդ մարմնացումը լինում է ծննդի միջոցով, նոր ծնունդ երեխան որեւէ նախահօր ոգու նոր մարմնացումն է։ Ոգին քարից անցնում է կնոջ արգանդն եւ այդպիսով կինը յղանում է։ Այդպէս էր մտածում նախապատմական հոգեպաշտութիւնը։

Աւստրալիայի վայրենի ցեղերի մէջ, համաձայն Սպենսեր ու Գիլլեն հետազոտողների հաւաքած նիւթերի, կնոջ յղացումը բացատրւում է ո՛չ թէ սեռական յարաբերութեամբ, այլ նրանով, որ նախնեաց ոգիները մտնում են կանանց արգանդը, երբ վերջիններն անցնում են որեւէ «մանկանց հոգիների քարի» մօտով։ Ամէն մի վայրենի աւստրալուհի իր յղութեան սկիզբը համարում է ո՛չ թէ ամուսնական մերձեցումից, այլ այն վայրկեանից, երբ նա զգում է իր մարմնի մէջ պտղի շարժումը։ Աւստրալիացիների «մանկանց հոգիների քարերը» կոչւում են «էրատիպա», որ թարգմանւում է մանուկ կամ երեխայ։ «էրատիպա»ները արտաքուս կլորածեւ քարեր են, մէջտեղը ծակ։ Աւստրալիացիների կարծիքով այդ ծակից են նայում մանկական հոգիներն եւ ընտրում այն կանանց, որոնց արգանդի մէջ են ցանկանում մտնել։

Հայ ժողովրդական հաւատալիքների մէջ նկատելի են հետքեր, որոնք մեծ նմանութիւն ունին աւստրալիական վերոյիշեալ հատալիքին։ Անշուշտ այս գէպըւմ հայի ու աւստրալիացի վայրենու միջեւ փոխադարձ ազդեցութեան կամ փոխանցման մասին պնդելը — անհեթեթութիւն կը լինէր։ Սակայն այդ նմանութիւնն միայն գալիս է ապացուցելու, որ միատեսակ պայմաններում հոմանիշ հետեւանքներ են առաջանում։ Ժամանակակից Աւստրալիայի վայրենի ցեղերի քարէջարեան շրջանին յատուկ կեանքի մըթ-

նոլորտում եւ ընկերային-տնտեսական պայմաններում տիրող աշխարհայեացքը հնարաւորութիւն է տալիս մեզ պարզ կացուցանելու եւ վերլուծելու, որ հայ ժողովրդական հաւատալիքների մէջ զոյուլթիւն ունեցող քարի պաշտամունքը ներկայացնում է նոյն հիմունքներն եւ նոյն էութիւնը։

Արդեօք նոյն հոգեպաշտական հայեացքը կնոջ յղացման ու բեղմնաւորման վերաբերմամբ չե՞նք նշմարում «ծակ քարերի» եւ «թուխ մանուկ» կոչուած քարերի մասին եղած հաւատալիքների մէջ։ Հայերի «ծակ քարերը» կամ «թուխ մանուկները», որոնք սփռուած են Հայաստանի գրեթէ ամէն անկիւնում, ըստ ամենայնի յիշեցնում են աւստրալիական «էրատիպան» թէ՛ իրենց արտաքինով եւ թէ՛ իրենց հետ աղերս ունեցող հաւատալիքներով։ Զաւակ տենչող ամուլ հայ կանայք ուխտ են դնում այդ քարերին, աղօթում ու երեք անգամ անցնում են այդ քարերի ծակով, հաւատալով որ որդի կ'ունենան։ Անշուշտ սնտրիստալիստ հայ գեղջկուհին քաջ գիտէ թէ յղութիւնն ու որդեծնութիւնն կարող է առաջանալ միմիայն սեռական յարաբերութիւնից, բայց եւ այնպէս որդեծնութեան անկարողութիւնն արդէն առիթ է տալիս կնոջը կառչելու դարերով աւանդաբար պահպանուած հաւատալիքին, թէ իր յղացումը նա կը ստանայ «ծակ քարից» կամ «թուխ մանուկից»։ Այստեղ պարզորոշ աչքի է ընկնում նախնական այն հաւատալիքի մնացորդը, թէ ծակ քարից մանկան հոգին (թուխ մանուկը), որ հանդիսանում է որեւէ նախահօր ոգի, մտնում կնոջ արգանդն ու մարմնանում։

Ահա այդ հոգեպաշտական գաղափարն է պարունակւում քարի պաշտամունքի հետ աղերս ունեցող ստորեւ նկարագրուած մի քանի հայ ժողովրդական սովորութիւնների մէջ։ Վասպուրականում յղի կանայք, որպէս զի հեշտութեամբ ազատուին, ուխտ են դնում Մոքսի Դաշտ-թաղում բարձրացող «Աստուածամօր քար»ին եւ իրենց մէջքը յենում են այդ քարին։ Նոյն Մոքս աւանի Դաշտ-թաղի արեւելեան կողմը գտնուող փոքր Պեստ (պարսկերէն՝ ապաստան) անուանով լեռան գագաթը ամէն տարի Աւետման տօնին գիշերով ուխտ են դնում ամուլ կանայք։ Կտուց անապատի բլրակների շարքի գագաթներից մէկում կան արհեստական եր-

կու քարայր, Արեգին անունով, միմեանց վրայ ու իրար հետ հաղորդակցող անցքով. ամուլ կանայք ուխտ են գալիս այստեղ, մոմ վառում, խոնկ ծխում եւ եօթն անգամ անցնում այս քարայրների միջով: Բորչալուի դաւառումն էլ կայ այդպիսի ժայռ Շուլավեր գիւղի մօտ. այդ ժայռի մէջ կան 3 ծակեր, որոնց միջով 3-ական անգամ անցնում են ամուլ կանայք: Նմանապէս նոյն դաւառի Ս. Նշան վանքի մօտ մէկ քարայր կայ «Թընդոց» անունով, որի անցքով երեք անգամ անցնում են չրերք կանայք: Զանգեզուրում ամուլ կանայք երկու ուրաթ եւ մէկ չորեք-չարաթ կամ մէկ ուրբաթ եւ երկու չորեք-չարաթ օրերը եօթը հատ քար դնելով իրենց տակը լողանում են:

Ե.

Քարի պաշտամունքին առնչող՝ կնոջ յղութեան մասին հոգեպաշտական հաւատալիքը յետագայում փոխում է Փետիշիգմի, որ արտայատում է Փալլիւսի պաշտամունքով: Այս հաւատալիքի մէջ անշուշտ գերիշխում է արդէն սեռական յարաբերութեան ըմբռնումն, որպէս պատճառ կնոջ յղութեան: Քարէ Փալլիւսը կամ Փալլիւսածեւ քարերն ու ժայռերը համարում են սրբութիւններ, որոնց զօրութեամբ չրերք կանայք, շնորհիւ գործադրած մոգական միջոցների, կարծում են, որ կարող են ստանալ արգասաւորութիւն եւ իրենց այրերից յղանալու ընդունակութիւն: Այդ Փետիշիգմի իր հերթին դրդում է նոյն իսկ արհեստականօրէն պատկերացնել ժայռերի ու կոնածեւ քարերի վրայ քանդակով կամ նկարով Փալլիւսը, եթէ տուեալ վայրերում չեն հանդիպում Փալլիւսածեւ բնական քարեր: Այդ արուեստական Փալլիւսների մէջ՝ նմանողական մոգութեան հետեւանքով տեսնում էին այն զօրութիւնը, որ առաջնորդ վերագրում էին «ծակ քարերի» կամ «թուխ մանուկների» մէջ բնակուող ոգիների: Փալլիւսի պաշտամունքը մի քանի հեթանոսական հաւատալիքների մէջ ստացել է կրօնական ու կոապաշտական բնոյթ: Բաւական է յիշել հին հրէական Ֆէգորը, հին յոյների Պրիապը, հնդուսների Լինգամը:

Հայ ժողովրդական հաւատալիքներում, տակաւին «թուխ մանուկների» ու «ծակ քարերի» հետ միասին հանդիպում ենք նաեւ

Փալլիւսի պաշտամունքը: Փալլիւսածեւ բնական ժայռերն ու քարերը, բայց աւելի սպէս ժայռերի կամ քարէ կոթողների վրայ քանդակուած Փալլիւսները երկրպագութեան առարկայ են լինում չրերք կանանց կողմից: Զանգեզուրի դաւառում Տաթեւից դէպի Բոնակոթ տանող ճանապարհի վրայ մի ժայռ-քար կայ 2 մետր բարձրութեան եւ 4 մետր լայնութեան, որ պարտ-ֆաթ է կոչւում. սրա մէջ տեղը մէկ մետր բարձր եւ $\frac{1}{2}$ մետր տրամագծով ցցուածք է երեւում: Ամուլ կանայք, ուխտ գալով այդտեղ, չընում են այս «պորտ քարի» բոլորքը եւ ապա իրենց մերկացրած փորը քսում են նրան: Ախալքալաքի դաւառի Մուրճախէթ գիւղի մօտ կանգնած է 4 մետր բարձրութեան քարէ կոթող, որի արեւմտեան երեսի վրայ քանդակուած է Փալլիւս. չրերք կանայք ուխտ են գալիս այստեղ եւ կարագ-իւղ են քսում այդ Փալլիւսին: Նոյն դաւառի Գանձա գիւղում կայ 4 մետրաչափ բարձր քարէ սիւն, որի արեւմտեան կողմի վրայ նկատելի է Փալլիւսի ուռուցիկ նկար: Հին Նախիջևանի Կարճեւան գիւղի մօտ իրար քով կանգնած են 2 քարեր 2 մետր բարձրութեան, որոնցից մէկի վրայ երեւում է Փալլիւսի պատկեր: Վասպուրականումն էլ կան մի շարք այդպիսի ժայռ-քարեր, որոնց վրայ քանդակուած են Փալլիւսներ, ինչպէս օրինակ՝ Արտամետի ձորի լանջին, Շահ-բաղ եւ Շուշանց գիւղերում եւ այլն, որտեղ ամուլ կանայք ուխտ են գալիս, աղօթում, բոլորքը չընում ու ապա մէջը խփում են այդ Փալլիւսներին:

Զ.

Քանի որ պաշտամունքի քարերը ըստ ժողովրդական հաւատալիքների հանդիսանում են ոգիների ապաստան եւ քանի որ այդ ոգիները, իբրեւ նախնիքների հոգիներ, չարոնակում են որոշ կապ պահպանել իրենց կենդանի ազգակիցների հետ, ուստի եւ վերջինները միշտ նրանցից օգնութիւն են հայցում: Տակաւին թոյլ զինուած լինելով բնութեան դէմ մղած դաժան պայքարում եւ հանապազ ենթակայ այդ բնութեան ուժերի ճնշող տիրապետութեանը, քարէղարեան մարդն իր տնտեսական գործունէութեան ու բնակեցւած կեանքի մէջ ապաւինում էր իր պաշտելի քարերի զօրութեանը, իր յոյսերը

ղնում էր սրանց գերբնական ուժի վրայ: Այստեղ էլ ժողովրդական հաւատալիքները հոգեպաշտութիւնից անցնում են ֆետիշիզմին, ըստ որում գերբնական ուժի, սրբազան զօրութեան նշանակութիւնն արդէն վերագրում են ո՛չ թէ քարի մէջ ապաստանուած ոգիներին, այլ սոսկ այդ քարերին:

Հիւանդութիւնները, բնութեան արհաւիրքները, ապագայ ու ներկայ կեանքի անորոշ վիճակն ու բախտը — այդ ամէնն նախնական մարդու կեանքում կարեւորագոյն խնդիրներ էին, որոնց հանդէպ նա անզօր, անօգնական էր զգում սեփական ուժերով հանդէս գալու: Կեանքի հենց այս դէպքերումն էր նա ամէնից շատ դիմում իր պաշտելի քարերին:

Եւ ահա ժողովուրդը հաւատում է, թէ կան յատուկ քարեր, որոնք օժտուած են բժշկական զօրութեամբ, կան քարեր, որոնք զուլակում են մարդու բախտն ու յաջողութիւն են տալիս նրա գործին, վերջապէս կան քարեր, որոնք իրենց սրբազան ազդեցութեամբ նեցուկ են հանդիսանում երկրագործական տնտեսութեան մէջ տանջուող եւ բնութեան ուժերին ամբողջովին գերուած աշխատաւորին:

Ինչպէս եւ սպասելի է, իրենց նշանակութեամբ ու քանակով առաջնակարգ տեղ են զբաղում բժշկական զօրութիւն ունեցող քարերը: Չէ՞ որ ամէն տեսակ հիւանդութիւններն առաջանում են չար ոգիներից, մութ ահաւոր ուժերից, որոնց հանդէպ մարդս անզօր է առանց բարի ոգիների օգնութեան: Ուստի նա իր հիւանդութիւնների բժշկութիւնն հայցում է պաշտած քարերից. սրանցից իւրաքանչիւրը յատուկ հիւանդութեան բուժիչ լինելու հոչակ էր վայելում:

Հայաստանում ամէնից շատ տարածուած են եղել հիւանդ երեխաներին բժշկող քարերը: Մանկան հիւանդութիւնն ամենադժուար ու անհասկանալի երեւոյթն է համարուել. մահացութիւնն երեխաների մէջ միշտ էլ աւելի մեծ չափեր է ունեցած: Վատ պուրականում յայտնի են հայկաբերդ, Բալալոս, ծակ-փար, սանդի-փար անուններով ժայռ-քարերը, նաեւ այսպէս կոչուած փարէ-կամուրջները: Մայրերը ուխտ են գալիս այս քարերին, իրենց հետ բերելով «թալկա-ցած», «թալի», «կոխ-տուած», ջերմոտ, հազող եւ այլ տեսակի հիւանդ երեխաներին:

Նրանք մոմ են վառում, աղօթում եւ ապա հիւանդ երեխաներին 3—7 անգամ անցկացնում ծակ քարերի, քարէ կամուրջների միջով, կամ շրջում այդ քարերի բոլորքը եւ լողացնում: Աւելորդ ենք համարում մի առ մի յիշատակել այստեղ գրեթէ բոլոր հայաբնակ գաւառներում գոյութիւն ունեցող այդ տեսակ բազմաթիւ «թալալոսներն» եւ նման քարերը:

Ծրեռան:

ԴՈ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ

(Շարունակելի:)



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՐՈՋՆԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Մերձաւոր Արեւելքի հնագոյն պատմութեան մասին՝ բացի յունական եւ ասորական հակիրճ ու անբաւական տեղեկութիւններէն՝ ոչինչ գիտէինք: Գերմանական պեղումները Հիսարլիկի մէջ, ուր Հոմերոսի Տրոյադան կը փնտռուէր հնագէտներու կողմէ՝ հետաքրքրական արդիւնք ունեցան եւ ապացուցին որոշ խնամութիւն մը բարեւական մշակոյթին հետ: Մանրամասն ոչ մէկ բան պատմեցին սակայն այն պետութիւններու ու ազգերու մասին, որոնք երբեմն Փոքր Ասիոյ զանազան մասերուն մէջ ապրեցան եւ գործեցին: Հետեւաբար այդ պեղումները առանց արձանագրութիւններու համը էին:

Բողազքէօյի՝ երբեմնի Հատաշուշ մայրաքաղաքին աւերակներուն պեղումները աւելի արդիւնաւոր էին: Գերմանացի արեւելագէտը H. Winkler 1906ին եւ 1907ին Բողազքէօյի շուրջը պեղումներ կատարեց եւ բախտի բերումով գտաւ հեթիտ արքաներու (Հատուշիլի, Մուրշիլի եւ այլն) գլխաւոր դիւանը, որ բազմաթիւ սեպագիր պնակիտներ կը պարունակէր, որոնք բոլորովին անծանօթ լեզուով մը գրուած էին: Գերման ծանօթ ասորաբանները Delitzsch, Winkler, Meissner եւ այլն ի զուր փորձեցին լուծել այս տարօրինակ լեզուն: Համաշխարհային պատերազմի ընթացքին լուր տարածուեցաւ, որ երիտասարդ չեխ գիտնական մը յաջողեր է լուծել հեթիտերէնի հարցը: Այդ համեստ